

ԻՐԱՒՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլխարիոյ համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արսասահմանի համար (Երկու փուլ մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
ԿԱՆԽԻՆ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկի հետեւեալ հաճեցով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՒՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ն.Ա. (Պուլխարիա)
Редакция на вѣст. Редакция du journal
„ИРАВУНКЪ“ „Iravounk“
ВАРНА (България) VARNА (Bulgarie)

Խմբագրութեան նաղդեայ գրութիւնի
էս չեն դրկուիր եւ յարմար դատաւար-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյնովին կամ մասամբ:
Ծանուցումք թոյր 20 սանթիմ. երե-
քն աւելի անգամներու համար 20 0/0
զեղջ կը լինի:

ԱՆԿՈՂՄԱԿԱՆ ԸԼԱՆՔ

Հրազդական ոչ մէկ պայքար
ինչ աշխարհ անտիկի և անհամ
թուած է որքան Անանիայի և Շար-
ժովի վիճաբանութիւնը յեղափո-
խութեան մասին: Հակառակ Տ.
Չօպանեանի գրական արժանիքնե-
րուն ու Գապարի յստակ ու ամփոփ
ոճին, վէճը տաղտուկ կը պատճառէ
իր աննպատակ գոյութեամբը: Ան-
նպատակ՝ անոր համար որ գրուած
ներուն մէկ մեծ մասը արդէն շատ
ու շատ անգամներ խօսուած ու
գրուած է և ապա՝ երկու կողմին
չափազանցութիւնները, քաջքաջ-
ները, չեն ներեր մեզի յուսալ
թէ, այս բանակութեան ինչպէս
չըսեն, լոյս պիտի ծագի: Ծագե-
լիքը, շատ շատ, ինչպէս կը պա-
տահի միշտ երբ ճշմարիտը խոս-
տովանելու սեղանի վրայ պատրաստա-
կանութիւնը կը պակսի, ընթեր-
ցողներուն նուազ զարգացած գա-
սակարգին մտքին մէջ քիչ մը ա-
ւելի շփոթութիւն է յեղափոխա-
կան կարգ մը գործերու և երե-
ւոյթներու բնութեան մասին, ժո-
ղովորդին մեծ մասին քիչ մըն ալ
թերահաւատ դառնալն է հանգէպ
իր գործիչներուն և առաջնորդնե-
րուն: Աւելի ոչինչ: Սակայն չեմ
կարծեր որ «Միասնիտ»-ի ու «Շար-
ժով»-ի ուղածն ալ այս ըլլայ:
Ուստի իմ կարծիքով սխալ ուղիի
մէջ են: Եթէ հանրութեան օգ-
տակար ըլլալ, զայն լուսաւորել է
իրենց նպատակը, թող ներին ինչ
ըսել թէ, պարտին չտաքանցու-
թիւններէ խորշիկ և աւելի ան-
կողմնակալ ոգիով, անկախ մըտ-
քով խորհիլ մեր յեղափոխական
գործերուն վրայ:

«Շարժում» որ երբեմն Արփի.
արի վրայ անխնայ կը յորձակէր
և կամբաստանէր զայն թէ թըր-
քահայի և Ռուսահայի խնդիր մը
յարուցանելով ազգին մէջ՝ ուժերի
ջլատման պատճառ կը դառնայ,
վերջին ժամանակներ ինք սկսաւ
միեւնոյն գերը կատարել իր քա-
նի մը յօդուածներով որոնք Պոլ-
սոյ և Թիֆլիզի մէջ լայն խրատատ
մը բանալու բնոյթն ունէին: Եւ
Պոլսեցիներու մեղկութիւնը ձող-
կող այդ գրութիւնները օգտակար
էին յեղափոխական այն անվիրջ,
միօրինակ քարոզներուն շարքին
մէջ, որոնց պատճառաւ եթէ չեմ
սխալիր, Տ. Չօպանեան անտանկի
կանուանէ վարդօն և իրաւամբ:
Վարդօ շատ լաւ կրնար գիտնալ
թէ Պոլսեցիներուն յեղափոխական
գործին մէջ բնականաբար կոչուած
չէր խաղալ այն գերը, զոր պիտի
կատարէր գաւառացին. սակայն
ինչո՞ւ մոռնալ ինչ որ ըրաւ Պոլ-
սեցին այն գործերու մէջ որք
միտքերը յեղափոխութեան կան-
խապատրաստեցին: Եթէ Պոլսե-
ցիներուն մէկ մասին խոհալը ողա-
կունքն ու տօնաւային է, Սահա-
նադրութիւնը յղացող և գործող-
րող, Միացեալ ընկերութիւնները
հիմնող և Հայկական դատը իր
միջազգային խնդիր երեւան հա-
նող մարդիկ ալ ունեցան անոնք:
Արդար ըլլանք:
Պէտք է սակայն միւս կողմէ
խոստովանիլ թէ նուազ անտանկի
չեն ենթադրութիւններու և կսուի-
ներու վրայ հիմնուած այն վճիռ-
ները զորս Տ. Չօպանեան կար-
ձակէ հին գործիչներու և յեղա-
փոխականներու դէմ և այդ շեշ-
տով մը զոր մեծամասնութիւնը
միայն կրնայ ներշնչել: Ժողովուրդ-
դի առջի տրամադրութիւններուն
յեկնած՝ վարժապետանի, Օսեա-
նանի և Սորվիշէնի նման պատմա-
կան մարդիկը առանց որոշ փա-
տերու անուանարկելու ելլել, առ-
խուր, շատ տխուր ձեռնարկ է:
Կանխակալ միտումներով, ան-
հատներու կամ մասնաւոր շրջա-
նակներու ազդեցութեան ներքեւ
ամեն ինչ միակողմանի դատել ա-
զրելը եթէ արդէն ինքնին դատա-

պարտելի է, շատ աւելի մեծ, ան-
ներելի անպարտաճանաչութիւն մը
կը դառնայ հայ հրապարակագրին
համար, այն արտակարգ զժրադգ-
հանգամանքներուն մէջ որ Հայերս
կապրինք հիմա:
Անկողմնակալ ըլլանք:
Վաղարշակ
ՏԻԱՐ ՄԻՆԱՍ ԶԵՐՈՋ
Ի ԼԱ ՅԷ
— 0.0.0 —
Լա Հէյլէն յունիս 2ին կը գրեն
մեզ:
Տ. Մինաս Զերազ տեսակցու-
թիւններ ունեցաւ Խաղաղութեան
վիճաբանութիւն անգլիացի, ֆրան-
սացի, աւստրիացի, գերմանացի,
իտալացի, ամերիկացի, պուլկար,
սերպ, յայն և պարսիկ անդամներէն
սմանց հետ և թղթակցեցաւ միւս
ներուն հետ: Նաեւ, թուրք պատ-
ուիրակներէն զատ, ամենուր հա-
ղորդեց հարստահարական ընդար-
ձակ տեղեկագրերներ: Տեսակցեցաւ
վիճաբանութիւն Պատուակալ նախա-
գահ Պ. Թը Պօֆօնի և Հօլանտա-
ցի և օտար նշանաւոր անձերու
հետ: Միայն նախագահը, Տ. Թը
Սգաալ, միւրեց ընդունիլ զայն,
գուցէ չէզոք մնացած ըլլալու հա-
մար, ինչպէս մերժած է ընդունիլ
ուրիշ շատեր (Պէրլինի վիճաբա-
նովի նախագահն ալ, Պիլմարք,
ապաչէ վարուած էր հայ և ու-
րիշ պատուիրակութեանց նկատ-
մամբ): Տ. Զերազ իրմէ գրաւոր պա-
տասխան ինքրեց իւր ներկայած
պաշտօնագրերներուն: Տ. Թը Ստա-
ալի կողմէ, վիճաբանութիւն ընդհ-
քարտուղարը, նախարար վան Այս,
ժխտական պատասխանագիր մը
ուղղեց իրեն, որուն Տ. Զերազ
պատասխանեց մի ընդարձակ նա-
մակով, զոր բոլոր տեղական թեր-
թերն հրատարակեցին կամ թարգ-
մանեցին: Նա, ի նպատակ ազգա-
յին դատին, բազմաթիւ յօդուած-
ներ հրատարակեց տեղական մա-
մուլին մէջ և հրատարակել տուաւ
օտար թերթերու թղթակցնե-
րուն:
Իւր պաշտօնի գիւտնագիրս

կան մասն աւարտելէ յետոյ, ձեռ-
նարկեց օսմ. պատուիրակներու
քիւն տակ բանախօսութիւն մը
ընել, մոզական լապտերով ցոյց
տալու համար Հայկական կոտո-
րածի տեսարաններ: Թուրքիան
բաշա բողոքեց Պօֆօնի և իւր
ընկերներով Լա Հէյլէն մեկնել ըս-
պառնաց եթէ կառավարութիւնը
չ'արգելէ բանախօսութիւն և երկ-
րէն չ'արտաքսէ բանախօսը: Ու-
տիկանութիւնը բաւականացաւ ար-
գիւելով բանախօսութիւն, որ մա-
յիս 30ին պիտի կատարուէր: Բոլոր
հօլանտական թերթերը կծու յօ-
դուածներով դատապարտեցին կա-
ռավարութեան ընթացքը, և ու-
մանք Պօֆօնի անկումը պահան-
ջեցին: Նոր դիմում եղաւ ոստի-
կանութեան, հրաման ստանալու
համար: Տ. Զերազ երեկուան թեր-
թերով ծանոյց թէ պատրաստ է
ձրիապէս երթալ բանախօսել ամեն
հօլանտական քաղաք (այս պատ-
ճառաւ Լ'Առմէնիի առաջիկայ թիւը
սովորականէն ուշ պիտի հրատա-
րակուի բնականաբար): Թուրքիան
բաշա, որ հեռագրեր էր Սուլթա-
նին թէ աջողած է լուսնի Տ. Զե-
րազն և երկրէն դուրս հանել տալ,
որոշած է շքանշաններ և թանկ
նուէրներ բերել տալ հօլանտական
նախարարներուն համար: Վեց
ազգային երեսփոխաններ երեկ Տ.
Զերազին խոստացան իրենց պաշտ-
պանութիւն և սօքթ. Քուլբէր, որ
հօլանտայի կլատագօն է, ճա-
շի հրաւիրեց զայն և խոստացաւ
նախագահել իր բանախօսութեան:
Վիճաբանութիւն հայտնէր անդամնե-
րէն ամանք, յայտնելով Տ. Զերա-
զին թէ անհնար է որ ժողովը
Հայկական խնդրով զբաղի, խոր-
հուրդ տուեր են իրեն որ կրցա-
ծին չափ աղմուկ հանէ, ջլատելու
համար այն պիտութեանց ճիգերն
որոնք կը նկրտին խեղդել Հայկա-
կան խնդիրն: Երիտասարդ Թուր-
քիոյ կուսակցութիւնէն և Մակե-
դոնիոյ Թոյներէն ալ ներկայացու-
ցիչներ եկած են հոս, «բարեխ-
նամ» կառավարութեան դէմ մա-
քառելու համար: Տ. Զերազ տե-
սակցեցաւ նաեւ հանրաժանութ Տ.
Սգէտի հետ, որ Զարին հետ տե-

սակցելէ յետոյ հոս եկած է : Տ. Սդէտ ըսեր է իրեն . « Ձեր դա- տին յաղթանակը Ռուսիոյ և Անգ- լիոյ համաձայնութենէն կախում ունի : Այս համաձայնութիւն ան- կարելի չէ : Յոյս չը կայ որ Անգ- լիա և Ռուսիա հայկական խնդ- րով զբաղին այս տարի , այլ հա- մոգումս իմ թէ գալ տարի պիտի զբաղին անպատճառ : »


Թան Սրանուարտէ տունելով կը գրէ թէ երեսփոխանական ժողո- վոյ անդամ տօքթ . Քուլբէրի և Տ. Լիֆթինքի միջամտութեան չը- նորհիւ : Տ. Չերազ Ամսթէրտամի մէջ պիտի ընէ իր բանախօսու- թիւնը Հայաստանի և Հայոց վրայ : Թուրք պատուիրակները չափա- զանց դժգոհութիւն զգացին գոր- ծին այս վախճանը իմանալով : Գալով Տ. Պոֆօռի որ Սուլթանէն Օսմանիէի մեծ ժապաւէնը ստա- ցաւ , իր գիրքը հետզհետէ աւելի կը դժուարանայ :

Ժուռնալ տէ Տէպաի թղթակիցը կը գրէ թէ ոստիկանութեան կող- մէն Տ. Չերազի բանախօսութեանց արգելուիլը « տեղական մամուլի մէջ խնդրոյ առարկայ եղաւ և լա- չէյի պահպանողական լրագիրը , Տակպաւա , չի վայ առեցաւ բանա- խօսին կողմը բռնելու և կամբաս- տանէ կառավարութիւնը թէ երկ- րին հիմնական օրէնքը կը բռնա- բարէ : Միեւնոյն ժամանակ հրե- կոյթին կազմակերպիչները գործը վերստին ձեռք կառնեն և բանա- խօսը որ մտադիր էր Բարիզ վե- րադառնալ , կորոչէ երկրին մէջ մնալ իր բանախօսութիւնները և-

նեղու համար :

Պիտի արտաքսեն զինքը , սա- կայն վտանգաւոր ձեռնարկ մը պիտի ըլլար այդ : Եւ սակայն պէտք չէ դժգոհացնել տէրու- թեանց պատուիրակները : Ինչ ընելու է ուրեմն լաւ ըրած ըլլալու համար : Դժնեայ հանե- լուկ : »

ՏՐԱՅՑՈՒՍԻ ԽՆԴԻՐԸ



Բարիզի վճռաբեկ ատենը ար- ձակեց քերականութիւնը որուն՝ առանց չափազանցութեան կարե- լի է ըսել , անհամար կապաւոր- ամբողջ քաղաքակրթ շախարհը : Ֆրանսական արդարութեան բարձ- րագոյն դատարանը այդ վճռով ուժաւեց ըրաւ այն զինուորական դատարանին որոշումը որով Տրայ- ֆուս իբր հայրենիքի դաւաճան մշտնջենաւոր աքսորի դատապար- տուած էր : Տրայֆուս ա'լ դատա- պարտեալ մը չէ , այլ պարզ ամ- բաստանեալ մը որ աքսորաւայ- րէն Ֆրանսա վերադառնալով նորէն պիտի դատուի զինուորա- կան ատենին մը առջեւ : Չինքը հայրենիք փոխադրելու յատկացած յաճախորդը արդէն հրաման ստա- ցաւ ճամբայ ելլելու գէպի Սատա- նայի կղզին : Տրայֆուսի բարե- կամեանքն ցնծութիւնը չափ ու- սահման չունի : Տիկին Տրայֆուս խնդակցութեան անհամար հեռա- գիւններ , նամակներ , շնորհակա- րանքներ , նամակներ և ծաղիկ- փունջեր կընդունի ամեն օր , նոյն

խակ իրեն ծանօթ անձերէ և ար- տասահմանէն : Շատ բնական է այս , որովհետեւ վճռաբեկ ատեա- նին վճռով ամենամեծ անիրաւու- թիւններէն մէկն է որ կը ջախջա- խուի և հինգ տարի է ի վեր իր չլիւսնելուն մէջ չարչարող ան- մեղ դատապարտեալ մը ազատու- թիւն կստանայ ամեն կարելի մի- ջոցներով ինքզինք պաշտպանելու իր վրայ ծանրացող սոսկալի ամ- բաստանութեան մը դէմ : Գրեթէ տարակոյս մնացած չէ որ Տրայ- ֆուս իբր անմեղ ազատ պիտ'արձակ- ուի այն դատարանէն որ զինք պիտի դատէ երկրորդ անգամ , ու- լովհետեւ այն գրութիւնը որուն հիման վրայ , 1894ին , Տրայֆուս դատապարտուեցաւ , այսօր հա- տատուած է թէ Տրայֆուսի ձե- ռադիրը չէ , այլ Էսթէրհայիին : Էսթէրհայիի արդէն բացէ բաց կը յայտարարէ թէ ինք յօրինած է այդ կեղծ գրութիւնը Սանտհէր գնդապետին հրամանով :

Սակայն ամենակարեւոր կէտը հիմա Տրայֆուսի անմեղութեան հաստատուիլը չէ , այլ այն դժ- ուարին , ուելի ճիշդ՝ անիլ դիրքը , ուր կիսան Տրայֆուսը 1894ին դատապարտող դատարանին ան- դամները , իրեն դէմ վկայող բարձրատիճան զինուորականները , զինքը ամբաստանող նախարար- ները որոնք գիտակցաբար իրենց խղճին դէմ գործած , կամ իրենց գիրքին ու ատտիճանին համար աններելի անուշադրութեամբ և միամտութեամբ դաւադիրներու մեքենայութիւնները չի նշարկելով անմեղի մը կեանքին հետ խաղա-

ցած ու ֆրանսական արդարու- թեան ճակտին խոշոր արատ մը քսած են : Արդէն Էսթէրհայի Տէյլի Գրօնիքի խմբագրութեան լայնարարած է թէ ֆրանսական Լինդհանուր Սպայակոյտը ամեն խարդախութեանց տեղեակ էր , ինչ որ ինք պիտի հաստատէ որոշ փաստերով :

Ֆրանսայի պատուին համար փա- փայելի է որ Էսթէրհայի ստած կամ գտնէ չափազանցած ըլլայ : Չափազանց տխուր բան մը պիտի ըլլար տեսնել որ Ֆրանսայի զի- նուորական բարձրագոյն հեղինա- կութիւնը վայելող պաշտօնական մարմինը , արդարութեան գործին մէջ , խարդաւանքներու և կեղ- ծիքներու գիտակցութիւններէն ան- ու լուսած , կամ մինչեւ իսկ զանոնք քաջալերած , ըլլայ : Բանամայի խարտաւարութիւններէն և երկա- թուական ազտեղութիւններէն ետքը , ա'յս ալ պիտի վիճակուէր Ֆրանսայի :

Բայց ինչ որ ալ ըլլայ , իրո- ղութիւնները ակներեւ կը ցուց- նեն թէ Ֆրանսա տակաւ կը լինէ այն բարոյական բարձրութենէն ուր աշխարհ վարժուած էր զինք տեսնել ու սքանչանալ՝ Ֆրանսա- զերման պատերազմէն առաջ : Սա- կայն արդարութիւն է խոստովա- որ եթէ ստոր նենգութիւններու միջոցաւ Տրայֆուսի դատապար- տութիւնը կարելի եղաւ , միւս կողմէ գտնուեցան Չօլայի , Շէօ- րէր-Քէսթնէրի , տեղակալ գնդա- պետ Բիզաուի և ընդհանուր դա- տախաղ Մանօի պէս արդարակո- լով մարդիկ որ արհամարհելով ա-

ԲՈՆՈՒԹԵԱՆ, ՏԱԿ (13)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՅՍ ԿԵԱՆԲԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԺԱ.

Այն թուականին երբ հայ ազատ թերթի- ր կսկսին հրատարակուիլ եւ րոպական եր- կիրներու մէջ , հայ ազգին յեղափոխու- թիւն քարոզելու գործը գլուխ հանե- լու համար , Պօլսեցիէն աւելի կազդուի եւ յեղափոխական ոգին հարուստին ա- պարանքէն սկսելով անբացառապէս կը սպրդի գեղջուկ ամենապարզ խրճիթէն ներս . թերթերու հրատարակութիւնը զգալուն սրտերու մէջ ուրախութեան հետ հեռաւոր դրական յայտ մը կը ծը- նեցնէ , յոյս կը ներշնչէ , որովհետեւ վերացական կարգ մը չոր ու ցամաք իղձերու , հառաչներու կը յաջորդէ պար- բերական բողոք պարունակող հրատա- րակութիւնը որ բնականաբար կոչուած էր նորահաս երիտասարդութիւնը ազ- գային գիտակցութեան զօրաւոր զգա- ցումով եւ արդար վրէժով լեցնելու :

15 տարի առաջ գաւառական քա- ղաքներու եւ գիւղերու ուսուցիչները , իրենց պաշտօնի բերումով , մեծ գեր- կատարեցին միաբեր պատրաստելու : Առաջին շրջանին մէջ իրենց մատու- ցած ծառայութիւնը նշանաւոր է : Խօ- սել տուէք այդ գաւառի ուսուցիչներէն

մէկ քանին եւ պիտի տեսնաք թէ , ինչպէս զիրենք չըջապատող սերունդը դարերու ստրկական չղթային ահաւոր ծոռութեան բեռը կրելէ ետք , անկա- խութեան հեռաւոր նշոյլի մը հաւա- նականութիւնը նկատելով՝ աւելի ու խանդ կտրած յեղափոխական գաղա- փարին յարեցաւ , յեղափոխական խրճ- քակներ կազմեց իրեն կէտ նպատակի ունենալով տեղական կանոնադր : Ու- ժեր կազմակերպելու , ի պահանջը հար- կին ընդհանուր ապստամբութեան մը ծրագիրը վայելչօրէն առաջ քաշեցնելու համար : Նոր սերունդին , երիտասար- ղութեան եկան միացան մինչեւ իսկ պահպանողական նկատուած տարրեր , եւ իրական սեռը , այդ ստրուկը , ինչ- պէս ըմբռնուած է արեւելքի մէջ : Այդ կազմակերպութիւնները աւելի կրակոտ կերպաքանք առին երբ եւրոպական հայ ազատ թերթերէ ետք , Պոլիսէն , Կով- կասէն կամ Պարսկաստանէն նորանոր յեղափոխական բրորակառնութիւնը մը- տան կոյս գաւառները :

Ուրիշ գաւառներու մէջ եղածին պէս , Ակնի եւ չըջականերու մէջ ալ խումբեր կազմուեցան , դրամահաւա- քումներ սկսան ըլլալ : Վահրամը քանի- մը համախոհներով , յեղափոխական կազմակերպութեան պզտիկ ձեռնարկ մը ըրած էր որ զոյուրթիւն ունէր եր- կու տարիէ հետէ : Ձեռնարկը անպայ- ման համեստ էր , այսպէս ալ պէտք էր ըլլար Վահրամի կարծիքով , որ գործի նախնական վիճակին մէջ աւելի խո- հեմութեամբ վարուելու անհրաժեշտ

պէտք չառ տուելով կը զգար :

Կառավարութիւնը , սկսած յեղափո- խական տկար հոսանքը աչքէ չվրիպե- ցուց , սակայն մինչեւ մեր պատմած գէպերու տեղի ունենալը հոն՝ աչքի զարնող զօրաւոր փաստ մը ներկայա- ցած չէր եւ այս պատճառաւ ուրիշ տե- ղերու պէս կառավարութեան պաշտօնը աշխուրջ հսկողութեան մէջ կը կայա- նար : Մինչեւ 89 թուականը , յեղափո- խութեան անունով ո'չ հիդեքում կար , ո'չ հալածանք , մինչեւեւ այդ թը- ւականէն սկսեալ , մեր Մայր Հայրենի- քի ամեն անկիւններու մէջ կը գոր- ծեն թիւք պաշտօնեաներ արձակ հա- մարձակ՝ դրամ շորթելու եւ իրենց քսակը պարարտելու համար անպատկառ կերպով :

Ակնի մէջ յեղափոխութիւնը շահա- գործելու առաջին գործը թերեւս քայմազամ Բիզա ըրաւ դաւաճան Մինասի դրոյմամբ :

Յովհաննէս ազայի ձերբակալումին երկրորդ առաւօտը քայմազամ Ալի Է- ֆէնտին իր ներկայութեան կանչելով , վստահ իրենց մէջ կեցած մտերմու- թեան վրայ , գործին էութիւնը պար- զեց անոր եւ իմացուց թէ բանտար- կեալէն միայն յիսուս ոսկի պիտի առ- նուի զոր կէս առ կէս մէջերնին պի- տի բաժնեն : Ալի , կասկածեցաւ թէ Բիզա Էֆէնտին յիսուս ոսկիով գոհ պիտի ըլլայ , սակայն չը համարձակեցաւ ու- ռարկութիւն մը ընել եւ յայտարարեց թէ ամեն պարագայի մէջ պատրաստ է անոր հրամանին հնազանդելու :

« Հիմա , ըսաւ գայմազամը , երբ սենեակդ վերադառնաս , հրաման ըրէ որ ամբաստանեալը ներկայութեանդ բերեն . ամենէն անարգական եղանա- կով վարուէ՛ նետր , կեցողած նամա- կին խօսքը մի ընէր եւ աշխատէ որ կասկածելի նախադասութիւն մը փախ- ցնէ բերնէն : »

— Գլխուս վրայ , էֆէնտիմ :

— Անիկայ անվերջ առարկութիւննե- րէ զուտ պիտի բանայ , մտիկ անգամ մի ընէր եւ քանի մը հարցումէ ետք , հրամայէ՛ որ կրկին բանտ առաջնոր- ղեն զայն :

— Կէտ առ կէտ պիտի գործադրուին ձեր հրահանգները , էֆէնտիմ , կրկնեց Ալի մինչեւ գետինը ծռելով :

Հինգ վայրկեան վերջ քօլիսէրը ու- տիկան մը ներս կանչեց եւ հրամայեց որ բանտապահը ամբաստանեալ Յով- հաննէսը իր առջեւ բերէ : Բանտարկ- եալը ներս մտցուեցաւ , տխուր եւ սոգոյն ,

— Դո՛ւն ես Յովհաննէս Նիկողոսեա- նը , հարցուց Ալի էֆ . , խո՞տոռ նայուածք մը նկատելով վրան :

— Այո՛ , էֆէնտիմ , կարծեմ զիս պի- տի յիշէք :

Ծ . Կամսարական

Շարունակելի

մեն փնտա, ն փնտաինք, սպառ-
նալիք, մինչև իսկ իրենց կեան-
քին վտանգավոր, իրենց ձայնը
բարձրացուցին ի նպատակ իրաւուն-
քի և արգարութեան, զորս չի
գաղտնեցան պահանջել մինչև որ
ազգեցիկ և պաշտօնական անձն-
րու, սպայակոյտին, տաք գլուխ
շովեթներու ու անոնց հետեւող ա-
հագին ամբոխին հակառակ՝
յաջողեցան վերջապէս լսել տալ
իրենց ձայնը երկրին բարձրագոյն
գաղաքականին:

Յաղթանակ մըն է զոր ֆուսն-
սական արգարութիւն տարու և
զոր ուրիշ մէկ երկու նուազ բաղ-
գաւոր երկիրներու մէջ ալ օր մը
տեսնել հայերուս մեծ իշխան
լրացումը պիտի բլար:

ՏԵՍԱԻԹԻՆ ՍԸ

ՎԵՐԱՆԱԶՆԱՅ ՊԱՏԵՄԱՋՍԻՆ ՎՐԱՅ

(Շար. Լախաշոյ թիւէն)

Յաղկերտի կողմանէ՝ Հայաստան
զրկուած մոզուց տրուած ա'յն տա-
տիճան արտառուց ու չափազանց-
ուած հրամանները զոր Եղիշէ մեզ
կը պատմէ, կասկածելի են եւ հա-
կառակ իրականութեան: Շատ եր-
կար պիտի ըլլար այն հրամանաց
մանրամասնութիւնը գնել հոս.
միայն առ այս ընթերցողաց գո-
հացում տալու համար. Եղիշէի
85-89 էջերուն վրայ «իրաւունք»ի
արգոյ եւ ուշադիր ընթերցողաց
ուշադրութիւնը կը հրաւիրեմ: Այդ
էջերու մէջ պատմուած հրամանաց
գործադրութիւնը չենք գտնել
կատարուած՝ Եղիշէի ու փարպեց-
ւոյն պատմագրութեանց մէջ. մի-
այն Եղիշէ կըսէ թէ՝ հայ սուրաց-
եալ նախարարաց ինչպէս նաեւ
մոզուց գալստեան 25րդ. օգը,
մոզպետին հրամանին վրայ, եկե-
ղեցւոյ վրայ յարձակում գործուե-
ցաւ (տե՛ս Եղիշէ էջ 98). ուրիշ
գէպքի մը յիշատակութիւն մըն ալ
կը գտնենք փարպեցւոյն քով,
(տե՛ս Ղազար փարպեցի էջ 110-
1134): Եղիշէի ու փարպեցւոյն
այս վկայութիւնները կասկածելի
կը դառնան սակայն, երբ ինկա-
տի առնենք, որ այս երկու պատ-
միչք չէին կրնար լուռ ու անտար-
բեր գտնուիլ և չը յիշատակել
Յաղկերտի հրամանաւ Եղիշէի մեզ
պատմած հրամանաց գործադրու-
թիւնը, եթէ իրապէս գոյութիւն
ունենային անոնք. նոկայն վերու
գրեալ յիշատակութենէ դատ, ու-
րիշ ո՛ր է գէպքի յիշատակու-
թիւն չը լինելով, կատարուինք
կասկածանք վերաբերուիլ Եղի-
շէի ու փարպեցւոյն յիշատակու-
թեանց մասին, երբ մանուաւոր
հակառակ Եղիշէի տուած վկայու-
թեան, կաթողիկոսութիւնը կան-
գուն կը գտնենք ինչպէս առաջ,
նոյնպէս ալ յետոյ և քրիստոնէս-
թիւնը՝ հայուն կրօնքը: Այո՛, թէն

Յաղկերտի նպատակը հայերը մա-
զութեան դարձնել էր, բայց ո՛չ
այնպէս ինչպէս կը ցուցնեն մեզ
Եղիշէն ու փարպեցին. այսինքն
ոչ թէ բռնաբար, այլ մեղմիւ և
սիրաշահելով՝ Եղիշէի՝ Յաղկերտի
վերադարձ բռնի միջոցները չի
գործադրուեցան նոյն իսկ Պարս-
կաստանի մէջ, երբ Յաղկերտ Բ-
սոսկալի հալածանք մը մղեց քը
բիստոնէութեան դէմ:

Յաղկերտ Բ-ի քաղաքական հա-
յեցողութիւնն էր, մոզութիւնն
ընդունել տալ հայ նախարարաց
ու առաջանւոյն դէթ առ երեսու,
և հաստատել ատրուշաններ. զի
գիտէր թէ՝ ժողովրդեան միջոցաւ
մասը տակաւ առ տակաւ պիտի
աղդուէր ու հետեւէր իր ուսուցան-
ւոյն: Յայ քաղաքականութեան
սերտու փարած էր նաեւ Յաղկերտ
Ա. երբ վճռաձայնէ վերջ իր
Շապուհ օրդին թագաւոր դրու
հայոց վրայ: Զայս կականարէ խո-
րենացին իր Գ. գրոց ԾԵ. գլխուն
մէջ ըսելով. «Յետ որոյ Յաղկերտ
(Ա.) ոչ եւս ինոցանէ՛. ոյլ զՇա-
պուհ զորդի իւր թագաւորեցոյց-
եալ հայոց, հնարս գառնութեան
խորհելով՝ իբր թէ հանապոզ առ
նմա նախարարքն յանգչիցին խո-
սիւք, տուր և առիւք, խորհնա-
նութեամբ զի մարթ լինի զնոսա
և ի դին Մաղդեղանց սաղապեցու-
ցանել, որով ամենեւիմ զատգի-
ցեն ի Յունաց:» Յաղկերտ Բ-ի
այս քաղաքական գիտատարութիւնը
կըրէն տարբեր կերպով մեկնուե-
ցաւ և ուրիշ ձեւ տրուեցաւ զոր-
ծին և մեր երկու պատմիչներն
Եղիշէ ու փարպեցի այդ գոյնին
տակ կը ներկայացնեն մեզ պատ-
մութիւնը:

Արտաշէս Կարապետեան
(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կը խնդրենք որ հաճիք հրատարա- կել ձեր յառաջիկայ թիւթին մէջ ի նը- պատ հայաստանի սովետներուն վառնայի մէջ կազմակերպուած թա- տերական երեկոյթին ներկայ հաշիւը:			
Տոմսերէ գոյացած	682	ֆր.	
Զանազաններէ նուէր	29.50	»	
	661.50	ֆր.	
Այս գումարէն ծախսուած է.			
Թատրոնի վարձք	50	»	
Նուագածուներուն	16	»	
Տպագրութեան	15	»	
Թատերախաղի հեղինակի վարձք	15	»	
Հագուստի, գէնքի եւն վարձ	35	»	
Բեմական եւ զանազան ծախսեր	24.25	»	
	155.25	»	

Դեռ կայ 60 ֆրանք սպասուիլ զոր
հետզհետէ պիտի հաւաքենք. իսկ իբ-
րեւ զուտ հաւոյթ պատրաստ զրամ կը
գտնուի 446 ֆրանք եւ 45 սանթիմ
զոր յառաջիկայ կերակի օր ճամբայ կը
հանենք ի Պոլիս Ազգ. Պատրիարքա-
րան, նպատակին յատկացուելու հա-
մար:

Արդ, չնորհակալ ըլլալով ամեն տ-
նոնց որոնց սիրտը քարէ չէր եւ որք
մեր սովատանջ եղբայրներուն պատառ
մը հաց հոսցնելու նուիրական այս
ձեռնարկին օժանդակիցին իրենց դրա-
մովը եւ աշխատութիւնովը որոց մէջ
կը հասկցուի նաեւ ներկայացումը անձ-
նուիրաբար սարքող գերասանական
խումբը. ցաւօք կը յայտնենք որ մեր
մէջ գտնուեցան զեռ ախպիսներ. ո-
րոնք խապառ մերժեցին տալ տասը փա-
րայ անգամ եւ նոյն իսկ գտնուեցան
ալ որ անորակելի հակառակութիւն մը
յարուցին գործը կազմակերպու համար
եւ իրենց այս ընթացքէն չամչցան:

Ի դիմաց Մասնախումբի
Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Տ. ԱԹԱՆԱՍԻ

Մէկ ՆՈՐ ԽԱՅՏԱՌԱՌԻԹԻՒՆԸ

Պօթուշանի Տ. Աթանաս Էմիր.
զէնան պաշտօնագրերէ քահանան
իր անվայիլ պաշտօնավարութեամբ
բը այնչափ զգուշք բերած էր
ժողովրդեան և անպատուութիւն
եկեղեցւոյ, որ Պոպ. Պատրիար-
քարանը ստիպուած եղաւ վերջնա-
կան պատիժը տրամադրել անար-
ժան քահանային, այն է մերկա-
ցնել զինքը պաշտօնավարութեան
ամեն իրաւունքներէ եւ զրկել բո-
լորովին քահանայական գասէն, և
մասնաւոր չըրարեալականով ամեն
հայ հոգաբարձութիւններու ծա-
նոյց այս որոշումը: Սակայն Ռու-
մանիոյ համար մինակ այս չըրա-
բերական բաւական չէ. պէտք է
Պոպ. Պատրիարքարանը ծանուցա-
նէ նաեւ Կ. Պոլսոյ Ռումանիոյ
գեապանին, ազաչելով որ միջնոր-
դէ երկրին նախարարութեան՝ որ
ոստիկանութեան միջոցաւ ստիպէ
Տ. Աթանասը իր քահանայական
զգեստն ալ փոխել, և աշխարհա-
կանի զգեստ հագնիլ, քանզի ինչ-
պէս որ Պօթուշանցի ճամբորդե-
րէ կը տեղեկանանք, Տ. Աթանաս
սրճարան մը բացած է ուր որ
քահանայական գլխարկով և եր-
կայն գաւազանով ու քահանայի
զգեստով հագուած սրճագործի
պաշտօն կը վարէ խառնութիւն յա-
ճախորդները զուարճացնելով:

Քահանայական պաշտօնավարու-
թեան մէջ որչափ մեծ ալ էին իր
խայտառակութիւնները՝ դարձեալ
այնչափ աչքի չէին զարնել օտա-
րաց առջեւ, իսկ այսօր երբ քա-
հանայական ձեւով սրճագործ ալ
եղած է, անպատուութիւնը՝ հրա-
պարակաւ կըլլայ մեր եկեղեցւոյ
եւ ողբերգէ՛մ օտարաց առջեւ:
Ուստի Պատրիարքարանը պէտք է
անյապաղ ստիպուական միջոցներ
ձեռք առնէ Տ. Աթանասի այս
յետին կատակախաղութեան վերջ
տալու:

Ետ 25 մայիս 1899 ԼՈՒԹՅԻ

ԼՐԱՔԱՂ

Թիֆլիսի մէջ մայիս 16ին տօն-
ուեր է հայ վիպագիր Պերճ Պաօշ-
եանցի զբոկան և կրթական գոր-

ծունէութեան քառամնամակը:
— Տ. Աթանէ Շապուհեան որուն
նկարները քանի մը տարիէ ի վեր
կը ցուցադրուին Բարիկի սալօնին
մէջ, «Օֆիսիէ տ'Ագատէմի» տա-
տիճանը ստացած է Ֆուսն. կա-
ռավարութենէն:

— Բարիզէն կը գրեն մեղի թէ
հայ քահանայագործ Տ. Ա. Տէր-
Սարուքեանի մէկ արձանը, մերկ
կին մը (մուսան) որուն բոլորտիքը
կը գտնուին Ֆուսնացի անուանի
մատենագիրները այս դարու սկիզ-
բէն մինչեւ այսօր, Բարիզի Սալօ-
նին մէջ ընդունուել է:

— Վանի այցելու հովիւ Ներսէս
եպիսկ. Արալանեան իր պաշտօնա-
տեղին հասնելուն պէս հեռագրով
Պատրիարքէն 500 սկի խնդրած
է կարօտեալներուն համար:

— Ի նպատակ հայ կարօտեալներու
և որբերու Պարսկաստանէն 5,000
ֆռ. զրկուած է Ս. Պատրիարքին:

— «Արեւելք» կը գրէ թէ
բարձրատիճան եկեղեցական մը
330 սկի Պատրիարքին զրկած է
իւր նպատակ հայաստանի կարօտ-
եալներուն:

— Նոյն բարեգործական նպա-
տակով Գահիրէի Ընթերցասիրաց
Ընկերութիւնը թատերական ներ-
կայացում մը կազմակերպել է ո-
րուն զուտ հասոյթն եղած է 75
եգիպտ. սկի:

— Ինչպէս մեր նախորդ թուով
Պոլսէն հասած տեղեկութեան մը
համաձայն ծանուցինք՝ Պատրիար-
քը խաղաղութեան Դեսպանաժո-
ղովին հեռագիր մը տալով յայտա-
բարեր է թէ այն դիմումները զոր
եւրոպայական հայերու կողմէ կըլ-
լան Դեսպանաժողովին, ազգին
կողմէն կատարուած ըլլալու հան-
գումանքէն զուրկ են և թէ թուրքիոյ
ազգ. պաշտօնական մարմինները
չեն ճանչնար զանոնք: Այս լուրը
հանրութեան վրայ շատ յոռի տը-
պաւորութիւն գործեց որուն ազ-
գեցութեան ներքեւ հինգշաբթի
առաւօտ տեղւոյս եկեղեցիին մէջ,
Պատրիարքին յիշատակութեան
պահուն՝ քանի մը ազգայիններ
«չը իշուի, չը իշուի» պոռագին.
ասոր հետեւանքով ժողովուրդին
մէջ խառնաշփոթութիւն մը, ինչ-
պէս նաեւ տաք վիճարանութիւն-
ներ տեղի ունեցան, որոնք բարե-
բաղաւարտ վերջացան առանց ծա-
նը հետեւանքներու: Ոստիկանու-
թիւնը վրայ հասնելով հարկաւոր
տեղեկութիւնները առնելէ վերջ
մեկնեցաւ:

ԹԷՐՊԻՅԷ

Էտրատարըմը կը թալիմ ու թէր-
պիէ իթմէք իշին մէքթէպէր
աշուպ խալլը մէսորիֆլէրէ տիւ-
չուր օլմագտուլը. էվլաուարըմը-
զըն թէրպիյէսի վէ իլիմ թահսի-
լի իշին զահմէթ ու սէրվէթ սարֆ
իթմէմիզտէն մագսէտ՝ իսթիգպալ-
տու անլէրին նամուպու վէ մէրոտ

Էկեր բեւեալներ իշպու էն հէհւ-
միյէթըն օւան յօգթալա տրգգաթ
իթմէքսիդին, ֆիլան տտէմ իլիմ
սահիպի իմիշ տէյուպտէ, օնուն
ախլագընը թահզըզ ու թէճէսսիւս
իթմէքսիդին լաաստ կէէնի հօճա-
ինթիխապ իտէճէք օլուր իսէ,
չօգ տէֆա էվլատարըմըլըն իս.
թիգպալընը վէ ֆամիլիալարըն
նամուս ու հասիյէթինի էլիմիլէ
բայէմալ իթմիշ օլուրըլ, Պինա-
պերին նամուսըլ էվլատ հէթիշ-
տիրմէք իշիւն անլէրին նամուսըլ,
հիւանի ախլադ սահիպի հօճալար
էլինէ թէպիւմ իթմէլիլիզ, Ֆա-
գաթ թէէսիւֆլէ տէյպիլիրիզ քի
չու սօն սէնէլէրտէ Պուկարիտըն

պարզ միլի մեքթեպերի պու-
խուսուստու մէտուտ օլմատըգտան
մատտա ըքտէ պէտպախտ օլտը-
լար : Պու հալի հազըն կիւնէրտէ
մուֆատալէն իզհազ վէ թաֆսի-
րիթմէկի վատ իտըրից :

ԷՐՄԷՆԻՍԹԱՆՏԱ ԳԱՐԸՇԸԳԼԸԳ

Թաւմ կազէթասընըն ալտըդը
խուսուսի պիր թէլէկրաֆա նա-
ղարէն՝ ռուսիալը էրմէնիլէրտէն
միւրէքքէպ պիր չէթէ վան իւս-
թիւնէ հիւրիւմիւլ օլուպ, թիւրք
ասքէրինտէն կէրի սիւրիւլմիւլ
տըր: էրմէնիլէրտէն 10 քիչի էօլ-
միւլ վէ 10 քիչիտէ հարէլէնմիւլ,
թիւրքլէրտէն տախի օն գտտար
էօլիւ վարմըլ: Պու հաւատիս
պիգէ բէք շիւբհէլի կէօրինտիւ
կիւնտէն՝ շիմտիքիհպ պու պապ-
տէ միւթալէտաւն սարֆը նաղար
իտէրիգ:

— «Աժանս Գուլկար» ալաֆ.
յունիս 4 թարիխէ Սթանպոլտան
շու մահէտէ պիր թէլէկրաֆ գապուլ
իթմի տիր :

Մուշ հազընընտա սէքիզ էր-
մէնի ֆէսատճըլար ասքեր իւզէ-
րինէ աթէշ իթտիւէր վէ պիր չա.
վուշ իլէ տիկէր պիր մէնմուրը
հարաւատըլար : Ասքէրլէր էրմէնի-
լէրի գովաւայըպ սէքիզինիտէ
գուրշունլէ վուրտուլտր : Քէղա
Պիթլիս վիրայէթինտէ պիր քէոյ-
տէ էրմէնիլէր պէշ թիւրք հսւ-
տիւրմիւլլէր վէ հէտի շիւփհէլի էր-
մէնիլէր տէրտէսթ օլունմըշլար
տրր :

Սլօանպօլտոն կէմիշ յլան պէօյ-
լէ պիր թէլէկրաֆըն վերտիկի
հավատիսէ ինանմագ միւմքինսիզ
օլտուղընտան, հագըգաթ հալի
անլամագ իշիւն պաշկա մէնպաա-
լարտոն կէլէճէք հավատիսլերէ
պէքլէմէք լաղըմ տրր: Լաքին
համիտիյէ քիւրտլերին էրմէնր
քէօյլէրինտէ իշլէտիքլերի հէնի
ճանտվարլըգլարընտ էօ-
նիւնտէ տիկէր պիր ըննկ վերմէք
վէ մէսուլիյէթի էրմէնիլեր իւղէ-
րինէ աթմագ էֆքիտը իլէ շու
թէլէկրաֆըն ուլտուրըմըշ օլտու-
ղը էն գիյատէ ագլա հագըն տրր:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆ

Ի ՆՊԱՍՏ Տ. Յ. ԶԱՔՐԵԱՆԻ

որ այս իրիկուն պիտի ներկա-
յացուէր, յետաձգուած է յառա-
ջիկայ չորիքչարժի օրուան, 2
յունիս :

ሆኮቶኒናይፋ ሂ ኮጾ

Հիւքիւմէթին թէքլիֆի իւէ ին-
կիլիթէրա մէպուսան մէճլիսի Սու-
տան օրտուսը քօմանտանը ժէնէ-
նէաւ Քիշնէրէ՝ վաթանա իթտի-
կի խըտմէթլէրէ պիր միւքնաֆաթ
օլմազ իւզրէ, 30000 ինկիլիզ լիրասը
իշտա օյրնմասընր թաշթը գարարա

ק ת ת :

— Ռուսիաուման թիւրքիայա ավ-
տէթ իտէն 200 էլլմէնի ժուհահիր-
լէրին սինօրտու պուլլնան թիւրք
զապլոյէլէրի իւալափընտան գա-
պուլ օլլընալալուպ կէլի չէվրիտիք-
լէրինի վէ կապկաս վալիսինին
վիրաիկի էմր իւզլլէ անլէրին շիմ-
տիքի Երեւան վիլարէթինտէ գա-
լաճազլարը Մլրակ վէ ճնտէն ա-
լարագ «Նօվօսթի կազէթասը պիլ-
տիրիյօրլար:

— Աւաֆր. յունիս 4 թարիիլէ Սթանպօլտան չէքիլէն պիր թէ-
լէկրաֆա նաղարէն՝ 20 կիւնտէն
պէրի Ճիտտէտէ հիշ պիր եռ-
մուրճազ խասթալըզը գուհուր իթ-
մէմիշ օլտըղընտան, սըհհիյէ մէճ-
լիսի պունտան էլվէլ Հիճաղ սէ-
վահիլինտէն կէլէն վարօրլար ի-
չիւն գոնմսւշ օլան գարանթինտը
լաղվ իթմիշ տիր. լաքին աէրու-
նինտէ միւսլիման հաճը պոլլընան
վաբօրլար կինէ էսկի մէնվալ իւզ-
ըն գարտնթինա պէքլէյէճէքլէր
տիր :

— Գարատաղ Բրէնսինին քէնտի
բօլի ի ի գտնաւ տրդուլարընա մուտֆ-
ֆազ օլամույաճալընա գոննուսթ
հասըլ իտուպ բէք միւթէսիր
օլտուղընտան՝ հասթա վէ չըլկնլըլա
հազըն պիր հալէ տիւհար օլաը-
ղընա տաիր զուհուր իտէն շայ-
էայը «Աժտնն Ռուսէն» քիւլիյէն
թէքդիպ էլլէմիշ տիր :

— Յրանաւ ճիւղաւորի յէթ ղէյիս Մ. Լուպէ Բարիզէ ետգըն Անթէօյ նամ մահալտէ իճրա օլընան աթ եաւ ըըշընը կէօրմէք իւլլէ վիւքէլաւ րէյիսի իլէ պէրապէր մահալը մէգքիւրէ վասըլ օլտուղընտաւ քէն տիսինէ գաւրը պէօյլաք պիր նու

ստիճ վուզու պուսմը Վե «տիւնսիւն
Հուպէ» ոճտալտըը իշիտիւմիշ տիւր :
Պիւր գաշ քիշի հիտտէթլէ Ս :
Հուպէնին հաննհա գատար կիթ-
մէք իսթէմիշէր իսէ տէ , ըշիս իլէ
պուլընան զապիթլէր Վե սայիւր
զաթլար թարաֆընտան մէնն օ :
լունմըշար : Նիւմայիշին սէրկէր-
տէլըլէրինտէն քոնթ Գրիսթ իանի Ս :
Հուպէնին բէք հազընընա կէլմէյէ
մուաֆիքազ օլուպ , էլի իլէ անըն
շապգասընա տօգանմը իսէտէ , օր-
տա պուլընտնլար Վե պա խոստս
թէնէրալ Պրիւթէր Վե թիւրք սէ-
ֆիրի կիւճէ քոնթը օրտան տէֆ
իսէպիւմիշլէր : Պատէհու պու ա-
տէմ գալապալըգ արասընտա կիւ-
զէլ պիւր տայազ եէտիքտէն սօնրա՝
քէնտիսի գան իլէ միւլէմմա Վե էլ-
պիսէսի լարա բարչա օլմուշ պիւր
հալաէ բուլիցիայէ թէսլիմ օլունմը
տըր : Պու նիւմայիշին սէրքէտէ .
լէրի զրալըգ թարաֆկիւրլէրինտէն
Վե անթիսէմիթլէրտէն (Էահուտիւ-
լէրի գարշը օլան ֆրգատան) օ :
լսպ , շայէսթէ օլուգլարը ճէզա-
յը Վէրմէք իշիւն հիւքիւմէթ թա-
րաֆընտան իճապը իճրա օլունմը
տըր :

— Իզմիրաէ պուլընան կերիտլի
միսլիման մուհաճիլլէրին իշլէտի-
կի ու յկունսրցորդլարը Պապը Լիի

Թըղգաթը նաղարա ալարագ, աճ.
 էթին Անատոլըն տիկէր մահալլէ.
 րինէ տալըթըլմատընագարար վէր.
 միյ աիւր :

— Տիրելու համար թիւիւք էր վեղոր
կալուար պէյնինտէ պիր գազկա
վուգու պուլվուշ օլուպ, ինպը
նըն իճրասը իշին Ստնասթըր
վալիսի մահալը մեզքիւրէ կիթմիշ
սիր :

ՄԵԾ Վ ԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ



መግቢያ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՇԽԱԻՈՐԵԱԼ

Ա. ՊԱՐԳԵՒՆ Է 500,000 ՀԲ. ՈՍԿԻ

50,000	ամսեր հրապարակ հանուած են, որոնց	25,000	ը պիտի շահին հետեւալ կերպով, հետկա տարւոյ՝
Յուլիս	9ին	1,500	թիւեր 92,680 Քր.
Յուլիս	7	1,500	» 135, 180
Օգոստ.	4-5	2,000	» 241,780 »

Սեպտ. 3-4	»	»	309,080	»
» 23-24	»	»	363,240	»
Հոկտ. 13-31	»	»	3,379,040	»

գրւեւն են ռսկի. ՅՐԱՄԳ	Մէկ ութերգ.	
դէս քառերգ	1. 35 ֆ.	
» 5 »	2 »	
» 8 »	2. 50 ֆ.	
» 16 »	4 »	
» 20 »	5 »	
» 28 »	7 »	
» 34 »	12 »	
» 24 »	6 »	
» 17. 20 8-60	4. 30 »	
» 115. 20	57. 60	28. 80 »
» 14. 40 »		

Գնելու եւ մանրամասն տեղեկութեանց համար
պէտք է գրիւ Սեդակաւոր Տիար ՄԱՐԳԻՍ ԳԱՏ-
ՐԻՐԻԷԼՆԻՔ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԴԱԵԱԼ տղն ԿՏԱ-
Կ համարութեան:

ԾՐԱԿայ քաղաքներէն եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին:

ԻՐ. — Ա. Կարգէն չի սկսող մը, եթէ սկսիլ ուզէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն, ըստ կանոնադրի պարտաւոր է առջի կարգերուն փոխարէնն ալ զճարիլ:

ՀԱՅԿԱՅԻՆ ՄԱՐԿԱՆԻՆԻ ՓԵՏԱԿԱՆ ԶԵՐԱՆԻԻ

ԳՈՐԾԱՐԱՆ ՕՐԻԷՆՔ ՀԵՐԱՆԻԻ

Մ. ՎԵՊԻՍ

Handwritten: 77. 78. 79. 80.



Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ